

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարապետացիք զինում են ուղղակի
Тифлисе. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
խորանայն րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԹԻՒՆ

Մանկական թատրոն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԻ թիֆլիսի դրամա. Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻԴԻՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՒՆԿԱՆ: Գաւթի բէկ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Մեր հասարակութիւնը ամեն բանի մէջ ծայրայեղութիւն է սիրում: Առնենք օրինակի համար թատրոնի գործը:

Մի ժամանակ մեր հասարակութիւնը անբարոյական էր համարում թատրոնը առհասարակ, չէր յաճախում թատրոնական ներկայացումները, իսկ այժմ այն ծայրայեղութեանը հասաւ, որ հայոց և վրաց թատրոնական ներկայացումների ժամանակ դուր շատ անգամ կը տեսնէք լոճաներում, բազկաթոռներում և աթոռներում ծնողներին իրանց երեխաների հետ: Նրանք չեն մտածում այն բանի վրա արդեօք այն պիտեան, որի ներկայացմանը նրանք բերում են իրանց զաւակներին բարոյական է, թէ բարոյական չէ մանուկների համար, կարող է կրթողական թէ փչաց-

նող ազդեցութիւն ունենալ երեխաների վրա:

Ամեն տեղ հասկացել են արդէն, որ ինչպէս մանկական գրքերի բովանդակութիւնը պէտք է տարբերվի հասակ առած մարդկանց ընթերցանութիւնից, այնպէս էլ մանկական թատրոնական ռեպերտուարը պէտք է տարբերվի սովորական թատրոնական ռեպերտուարից: Բայց մեզանում այդ ճշմարտութիւնը դեռ չեն հասկացել և շատ անգամ դուր կը տեսնէք որ հայ և վրացի ընտանիքները տանում են իրանց հետ իրանց երեխաներին այնպիսի թատրոնական ներկայացումներին, որոնք տրվում են միմիայն հասակ առածների համար:

Այդ պատճառով չէ կարելի չը համակրել հայոց թատրոնական կոմիտէի այս օրերս արած փորձին մանկական ներկայացում տալու: Պիտեաների ընտրութիւնն էլ վատ չէր:

Նորերում մենք կարդացինք ռուս լրագիրներում որ Մոսկվայում Պուշկինի արձանի մօտ եղած թատրոնը շաբաթ մի անգամ տալիս է դպրոցական երիտասարդութեան համար ներկա-

յացումներ և այն օրը թատրոնի կառավարիչ տիկինը ճրի է ուղարկում մի քանի տոմսակներ Մոսկվայի այլ և այլ թէ իզական և թէ արական դպրոցներին: Այդ տեսակ ներկայացումների ռեպերտուարը, ինչպէս ասեցինք, պէտք է բոլորովին տարբերվի սովորական ներկայացումների ռեպերտուարից և պէտք է կրթողական ուղղութիւն ունենայ պատանիների համար:

Բոլորովին մանկական թատրոնը պէտք է կազմվի այնպիսի ռեպերտուարից, որ մատչելի լինի մանուկներին, ինչպէս մատչելի են լինում մանուկներին մանկական գրքերը առակներ, թեթեւ, դիւրամիտելի բարոյական ուսմունքներ, բարոյական պատումներ: Պատանիների համար ռեպերտուարը կարող է կազմված լինել այն պիէսաներից, որոնց հետ տեսականապէս նրանք ծանօթանում են գրականութեան պատմութեան դասերից: Մոսկվայի վերեւ յիշված թատրոնում աշակերտների համար տրվող ներկայացումները բազկացած են լինում գլխաւորապէս ռուս կլասիկական գրողների պիէսաներից,

Փօն-Վիգինի, Գրիբոեդովի և այլ սրանց նման հեղինակութիւններից:

Եթէ թատրոնը կրթարան է, եթէ նա սոյն դերը պէտք է խաղայ հասարակութեան մէջ, որ խաղում է գրականութիւնը, եթէ թատրոնը դպրոց է հասակ առածների համար, նա կարող է կրթական ազդեցութիւն ունենալ և նորահաս սերունդի վրա:

Բայց այն ժամանակ մանկահասակ հանդիսականների համար ռեպերտուարը պէտք է բոլորովին տարբերվի այն ռեպերտուարից, որ նշանակված է հասակ առածների համար:

Ցանկալի է որ մեր հայոց և վրաց բեմերը այդ ճշմարտութիւնը կատարեալապէս հասկանային և այդ ուղղութեամբ տանէին իրանց գործը, ժամանակ առ ժամանակ ներկայացումներ տալով յատուկ մանուկներին, կամ գոնէ երկու սեռի պատանիների համար:

Գ. Ա.

ԴԱՆԻԹ ԲԵԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

(1722—1728)

Դ.

Դանից լսելի եղաւ պարկապուկի (*) մեղմ հնչիւնները, որոնց ներդաշնակում էր աշուղի ախուր երգը:

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ,
«Թէ ինձ չը տաս դու մի պաշկի,
«Ես պարտնիւն դանդաղ կանեմ,
«Սրտիս ցաւը նրան կը յայտնեմ:

«Աղջիկ, աղջիկ, սիրուն աղջիկ,
«Թէ չը դառնաս դու իմ կնիկ,
«Ես պարտնիւն դանդաղ կանեմ,
«Քո մօր գրկից քեզ կը խլեմ:

«Թէ պարտն էլ ինձ չը լսէ,
«Խոր գեղերդան ինձ կը ծածկէ,
«Ան ժամանակ ես Աստուծոն,
«Կը բողբոջեմ միւս կեանքում»:

Դա ստորկի երգ էր, որ իր հոգեկան, սիրային զգացումները մէջ ևս դատաւոր է ընտրում պարտնիւն, որ նրանից է սպասում բոլորը, ինչ որ քաղցր, ինչ որ բարի է իր համար:

Ժողովրդական բանաստեղծի երգը դուրս կուգի մանկահասակ աղջիկներին ու հարսներին, որոնք ուրախ խումբով վազեցին հիւրերի առաջ: Պառաւ փեթեանի որդիները նոյնպէս դուրս եկան չնայելի զպալու համար: Բէկի տան ընդարձակ բակը լցվեցաւ խուռն ամբողջով:

*) Վրացիք կոչում են սա վիբրի:

Հիւրերի հետ եկած սպասաւորները, երկայն, ձողաձև կերտները բռնած ձեռներին, լուսաւորում էին այդ աղմուկի բազմութիւնը, որ իր խառնածայն բացականչութիւններով թողեցնում էր գիշերային լուսութիւնը: Հիւրերից մէկը, գինու ահագին լիտրան ձեռքին բռնած, անդադար ածում էր և մատուցանում էր իր ընկերներին: Ոմանք պարում էին, ոմանք թուշկոտում էին, իսկ ոմանք իրանց աններդաշնակ երգերով խլացնում էին աշուղի նուագաձեւիւնը, առանց ուղղութիւն դարձնելու նրա պարկապուկի երաժշտական եղանակին:

Նրանք խմբով մօտեցան բէկի սենեակի դռանը, այնտեղ կանգնեցին, գոռում, գոչում էին, որ նա դուրս գայ և իրանց ընդունէ: Բայց բէկը չը շարժվեցաւ իր սեղից, ոչ թէ նրանց չը պատկելու համար, այլ այնպիսի այցելութիւնները այնքան յաճախ էին կրկնվում, որ տա՛նուտէրը աւելորդ համարեց մի առանձին նշակութիւն տալ նրանց քմահաճութեանը:

—Կը կոտրենք դուռը, եթէ դուրս չը գաս,— կը կոտրենք, գոչում էին ամեն կողմից:

Այդ միջոցին Բայնդուր իշխանը ներս մտաւ և բռնելով բէկի ձեռքից, համարեա զօռով քաշեց նրան, ասելով:

—Ախր, ինչ որ ասում է քեզ պարսից շահնշահի բաթման-ղլիջը. քեֆի ժամանակ մեծն ու պստիկը մէկ գին ունեն.—գնանք: Երբ բէկը յայտնվեցաւ, եկուորները ընդունեցին նրան ուրախութեան աղաղակներով: Նըրանցից մէկը գինով լիքը բաժակը դէմ արեց: Բէկը ընդունեց, և բոլորի կենացը խմելուց յետոյ, հրաւիրեց նրանց իր մօտ: Բոլորը խմբով ներս մտան: Սենեակը լցվեցաւ խառն բազմութեանով: Բայց տեղ մնացել էր միայն խորոյկը, որ այդ միջոցին աւելի եռանդով բողբոջւում էր: Հիւրերը մի քանի րոպէ կանգնած մնացին, երգեցին, պարեցին, թուշկոտեցին, և իսպառ-

յոգնեցուց յետոյ, տեղաւորվեցան տախտի վրա, ուր առաջ նստած էր բէկը: Նրանց հետ եկած սպասաւորները գնացին տան տիրոջ ծառաների սենեակը, բէկի գինու կարասների բարիքը վաճելու համար: Մի քանի րոպէից յետոյ լսվում էին նրանց ուրախութեան խառնաշփոթ աղաղակները:

Աղաւթն զարմացած նայում էր այդ անհոգ, զուարճասէր մարդկանց վրա, որոնց նմանը միայն բարեկենդանի օրերում կարելի էր տեսնել, երբ թէ աղքատը, թէ հարուստը, երբ թէ խելացին, թէ անխելքը անձնատուր են լինում մի տեսակ գոգնութեան հասցրած ուրախութեան: Նա մտածում էր. միթէ դրանք պիտի լինեն իր հայրենիքի փրկիչները, միթէ դրանցից մի լաւ բան կարելի էր սպասել:

Բացի Բայնդուր իշխանից, մնացած հիւրերը տան և երեք հոգի էին, Նրանց մէջն էր արցախեցի Միքիթար սպարապետը, միակ տղամարդը, որ որոշվում էր բոլորից իր ծանրութեամբ, որը գործի հետ միացնել գիտէր և սառը մտածմունքը, իսկ քաջութեան հետ անվիճելի վճռականութիւնը: Նրանց մէջն էր լուսեցի Աւթանդիլ գինու դասկերը, մի չափազանց ջերմասէր և կրօնամոլ մարդ, որի մէջ ծիսապաշտութիւնը այն աստիճան անհատաւորութեան էր հասել, որ ամեն անգամ, երբ պատահում էր նրան իր պատը լուծել, հաւատարմաց էր, որ այդ մեղքը մի այլ ապաշխարութեամբ չէ կարող սրբել: Բայց միայն մի թուրք կամ պարսիկ սպանելով: Նրանց մէջն էին մեծ Գիօրգին և փոքր Գիօրգին, որոնք, որպէս երկու երկուորականներ, շատ նման էին միմեանց թէ գէշերով, թէ բնաւորութեամբ, միայն փոքր Գիօրգին իր քաջերից մէկը թիֆլիսում կորցրել էր մուշտեկուի մէջ և միշտ մի առանձին փափագով ցանկանում էր գիտնալ, թէ ով էր այդ արարող հասցնողը, որ ինքն էլ առիթ ունենար փոխարէնը նրա երկու քաջերը հանե-

լու: Նրանց մէջն էր երեսնեցի, մէկ ոտքից կաղ, Օհանէսը, մի փոքրիկ նենգաւոր մարդ, որ իր չափազանց խորամանկութեան համար յայտնի էր մականունովս «օյնըաղ»: Նրանց մէջն էր շուշեցի Ջաքարիայ իշխանը, մի ահագին տղամարդ, որ միշտ պարծենում էր, թէ իր պապը սովորութիւն ունէր ձաշին ամեն անգամ մի ամբողջ խորոված գառն ուտել: Նրանց մէջ էր զոյ ծառուրը, որը Վազախի կողմերիցն էր, և որի մասին պատմում էին, երբ նրան չէ յաջողվում ուրիշից մի բան գողանալ, նա գողանում է իր սեպական տրեխները, թաղցնում է և միւս օրը սկսում է բորիկ ոտներով ման դալ, որ արեւները նրա մօտ չը տեսնեն և գողուցնեն իր յայտնվել: Նրանց մէջն էր պատանի Մոսին Նախիջևանի կողմերից, որ իր գեղեցիկ աչքերի համար յայտնի էր անունովս «կարազեօզ»: Բացի դրանցից, այնտեղ էին շամախեցի թաթէոս բէկը և զանձակեցի աղայ Նիղալաբը, որոնց երկուսն էլ սաստիկ վիրաւորվում էին, երբ իրանց ընկերները առանց տխրոյսի լոկ ա՛նուաներով էին կանչում նրանց: Նրանց հետ էր և վաղարշապատցի ցարուքիւն տանուտէրը, որ սաստիկ նախապաշարմունք ունէր տէրտէրների վերաբերութեամբ, և միշտ ասում էր, երբ ինքը երազում դրանցից մէկին տեսնում է, այն օրը տանից չէ դուրս գալիս, որովհետև գիտէ, որ անպատճառ մի չար բանի պիտի հանդիպի: Բացի այդ ամեն կողմերից հաւաքված, փախուստական հայերից, նրանց մէջ կային երկու վրացի ազնուականներ, որոնց մէկին կոչում էին Սօսիկօ, իսկ միւսին Գաթիկօ, այս վերջինի մասին պատմում էր, երբ նա գերի ընկաւ Պարսկաստանում, և երբ պարսիկները առաջարկեցին նրան, թէ ինչ կը պահանջէ, որ մահմտականութիւն ընդունէ, նա պահանջեց մի զոյգ պաճիճներ (զանկապան) միայն:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կառավարութեան թղթաւթեմքը շուտով կը բանալը Հաւարարի հրապարակի երայ, մեզ պատկանելի տան վերի յարկու-ը ընթերցարան: Մենք կը ստանանք զանազան լրագիրներ, օրագիրներ, ամսագիրներ, և ամենանոր ընտիր գրեանք, որոնց յարմար կը համարենք: Ցանկացողները կարող են մի տարով անդամ ստորագրել, վճարելով յառաջատու (կանխիկ) 3 րոպէ, իսկ փոքր ամսից յետոյ 2 րոպէ:

Ընթերցարանի մուտքն է 10 կոպէկ: Ընթերցարանը բաց կը լինի առաւօտեան 9—մինչեւ երեկոյեան—10—ժամը:

Աղասի Մեկը—Այգեկեանց 2—4

ՓԱՍՏԱԲԱՆ ԵՎ ԳԵՆԻԻ ԴԸՄԻՏՐԻԵՎԻՉ ՏԻԽՕՄԻՐՈՎ, վերջացնելով իր գործերը Քուստայի մէջ, վերադարձաւ Թիֆլիս և յայտնում է իր կլինեանքին և դատաստանական գործերին վերաբերեալ խորհուրդներ չարաւորութիւն ունեցող անձանց, որ նա ընդունում է առաւօտեան 8—11 ժամը և երեկոյեան 5—8 ժամը: Գօրծինակի, հիւրանոց „Паризь“ № 3:

3—3

ՎԱՃԱՌՄԱՆ ԳՆԵՐՈՎ ձմեռվայ պայտներ 12 ր., ֆուֆայկաներ 2 ր. 50 կ., գլխարկներ 1 ր., մատուցարաններ 3 կոպէկ, ամաններ հատը 12 կ., հնդկական բրինձ 10 կ. ֆունտը: Անգլիական կոնֆետներ 40 կ., իսկ թէյ, որի ֆունտը ամեն տեղ 2 ր. 50 կ. արժէ, 1 ր. 80 կ. է ծախվում ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՆՈՒՄ:

3—12

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախվում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մագաղիները ստանում է թէյ ուղղակի պլանտատորներէ, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններէ և բաւականա-նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կախա և շօկալա-ֆրայ, մուրաբա և կոնֆէկաներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, թէ-փոլէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, զուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենթոր, թուղթ, մատիա-ներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-ժան քան թէ ուրիշ տեղ: Արժուրտու գալլէրում:

100—56

ՍՏԱՅՎԱԾ Է Կ. ՊՕՐԻ Իսկական, բնական ԱՆՈՒՇԱՀՈՏ ԾԻԱԽՈՏ ամեն տեսակի ԿԵՐԷԿ և ՍԱՄՍՕՆ զանազան գներով, ԱԶԱՐԵԱՆՑԻ Փա-րիկայից: Խնդրում եմ ցանկացողներին դի-մել Գօրծինակի պրոսպեկտ, Շիօեփի տանը մագաղիներ № 10.

1—3

ԱՅԳԻ կապալով է արվում: Ծախվում են ՏՈՒՆ ԵՒ ՀՈՂ: Հողը ծախվում է բաժիններով իւրաքանչիւրը 400 սաժէ: Վօրոցովակայա Նաբերեժնայա փողոցի վրա երկաթուղու տեխնիկական ուսումնա-րանի և պահեստի գեղատան մէջ № 52:

3—3 (7)

ՈՒՈՒՍԻՈՑ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԵԻ-ՏՐԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

Ստացուեցաւ ուղղակի գործարանից Բամ-սոն Միմս և Հէտի, երկաթէ գուլթաններ, երեք անիւների, ամենազոված տեսակից, որոնք արդէն ընդունուած են ամեն տեղ մանուսակ Երեւանի նահանգում: Իւրաքան-չիւր գուլթանի արժէքն է երեք խափիւ—85 րոպէի, իսկ գուլթանով աւանդներին զիջումն կը լինի: Նշանակաւ ստացուեցան երկրագոր-ծական զանազան մեքենաներ, և մեծ քա-նակութեամբ Ամերիկայի և Եւրոպայի զանազան տեսակ ապրանքներ: Մագաղի-նում պատուէր կընդունվի ամեն տեսակ մեքենաների և այլ ապրանք թէ Ամե-րիկայից և թէ Եւրոպայից բերել տալու մասնաւոր աշխատանքով: Հասցէն. Գլխա-ցօլայա փողոց գալերեյ Արժուրտի, Տըֆ-լիս:

3—10

ՅՐԱՆՍԻԱՅԻ ԱՅԳԵԳՈՐԾ ԳԱՐԻԵՆԻ ՍԵՐՄԵՐԻ ԴԵՊՕՆ պատիւ ունի հրաւիրել ցանկացողներին այցելել նրա ՀԱՒԱՔԱԾՈՒՆ Էկզո-տիական հազուադուր բոյսերի, մրգերի ծա-ռերի, որոնց համար Բրիտանի և Փարի-զի աշխարհահանգէսների ժամանակ ամենա-բարձր ընծաներ են ստացված: Մագիստրա, կամելիա, կոնիֆեր և այլ կանաչբոյսեր սա-լոնների համար, թուփեր և բոյսեր այգի-ների համար: Ամենալաւ տանձենիներ, խնձորենիներ, զեղձենիներ և կերասի ծա-ռեր: Յաւերտեխական մայրնա, մոշ, ծնե-բեկ: 500 տեսակ շիպօնիկ: Ամառնիա, ծաղիկների արմատներ: Մեծ քանակու-թեամբ պարտիզի բոյսերի և ԾԱՂԻԿ-ՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ: Գօրծինակի փողոց, տուն իշխան Մուխրանսկու, Թիֆլիսի Ժո-ղովարանի մօտ:

3—3

Մինչև այժմ չեղած ԱԿԱՆՑԻ ԻՒՂ ԲԻԻՇԿ ԸՄԻԻՏԻ, որ կատարելագործված է բժիշկ ՄԵՎԼԻ-ԿԻԻ ԴԵՅԶԻՑ: Ըողջացնում է ամեն տեսակ խո-լովիթի, եթէ նա բնական չէ: ԵՐԵՎԱՆԻ ԸՍ-տանալուց յետոյ ուղարկվում է ՄԻ ՇԱՅԿԻ ԻՂԻԿ, մանրամասն խճճՆԵՐՈՎ, գործածութիւն մասին: Այդ իւրը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր ԴԵՂԱՏՈՒՆ-ՆԵՐԻՑ և Ալեքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ, կազանակայա փողոց № 3:

27—52

ПРИНИМАЕТСЯ ПОДПИСКА

на 1881 годъ

НА

ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗСКИЙ КУРЬЕРЪ“

Подписная плата: городскимъ подписчикамъ, съ доставкою на домъ, по 4 руб. и ино-городнымъ, съ пересылкою по почтѣ, по 5 руб. въ годъ; за полгода же первымъ по 3 руб. и послѣднимъ по 4 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ: въ конторѣ редакціи газеты „КАВКАЗСКИЙ КУРЬЕРЪ“.

Иногородные подписчики адресуютъ: въ г. Тифлисѣ, въ редакцію газеты: „КАВКАЗСКИЙ КУРЬЕРЪ“, на углу Графской и Атаманской улицъ, въ верхнемъ этажѣ дома Квятковскаго.

ПРОГРАММА

ГАЗЕТЫ „КАВКАЗСКИЙ КУРЬЕРЪ.“

1) Правительственные распоряженія. 2) Телеграммы. 3) Передовыя статьи 4) Поли-тическое обозрѣніе. 5) Внутренній отдѣлъ. 6) Внѣшній отдѣлъ. 7) Судебная хроника. 8) Го-родское самоуправленіе. 9) Смѣсь. 10) Фельтоны. 11) Справочныя указатели. 12) Казенныя, торговыя и частныя объявленія.

Редакторъ-издатель М. И. Хитаровъ

3—5

2ր նոյեմբով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին ԿՕՆԳՐ-ԹԷՑ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիւսնայի ԿԱՅՍԱՌԻ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԷՑ 2 ր. առանց թղթի: Անգլիական թէյփոլիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ, Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԵԻ ԹԱՄԲԵ-ՐԸ, Զօնտիի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տուրքիի ԳՐԻԶՆԵՐԸ և Էկստրակտ կակաօ-շօկալի ծախելու համար, որոնք փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեղալ ստացան: ՀՈՏԱԼԻՑ ԹԷՑԻ ՅՈՒՆԸՑ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտու է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆետներ հազի դէմ 60 կ. ֆունտը:

26—100

ԱՄԼԻՑԵԼԵՆԵՆ ԵՏԵՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑ ՆԵՐ ԵՏԵՄԵՐՈՑԺ ԲԺՇԿԻԼԻ ԵՒ ԵՒԵԼԻՇԵՑԻՄԻ Թոյլ են տուած Մոսկվայի ԲԺՇԿԵԼԵՆ ՓԵԿՈՐՆԵՑԻՑ: Այդ միջոցները մեծ ԴՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ են գտել և առջարկվում են իբրեւ ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առաջների համար: Կարելի է ԵՏԵՄԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆԵԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐ-ԶՈՒՆԻԻ ԲԵՐԸ և փառ ՀՈՏԻ առաջն են առնում: Ըտամարոյթ բժիշկ Ե. Ե. Եղեկէյի ԳԼԽԵՒՈՐ ՊԵ-ՆԵՍԸ գտնվում է ՄՕՍԿՎԱՅԻՆՈՒՄ, ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐԸ, ՍՕԿՈԼՈՎԻ տանը: ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՑՈՒՐԻՆՈՎԻ ԿՈՎ ԿԵՄԵԼԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՆԵՍՈՒՄ: Ծախողների ՆՇԵՆԵԼՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

4—30 (11)

Ա Ն Գ Լ Ի Ա Վ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ									
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր.	5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ	Փ.	1 ր.	30 կ.			
—	1 ր.	10 կ.	—	—	—	—	—	—	—
—	1 ր.	20 կ.	—	—	—	—	—	—	—
—	1 ր.	40 կ.	—	—	—	—	—	—	—
—	1 ր.	60 կ.	—	—	—	—	—	—	—
—	1 ր.	80 կ.	—	—	—	—	—	—	—
Ամենալաւը	2 ր.	—	—	—	—	—	—	—	—
									46—100

Առնում են ամեն տեսակ ԶՈՒԳՈՒՆ ԵՒ ԼՂՆՉԻ կաղարաններ, Գէորգիան կկիզու ձեռ, ՄԳԻՎԱՆԻԻ տանը կախելթու գներով մարանում:

24—25

VICHY

Складъ въ ПАРИЖѢ, 22, бульваръ Монтмартръ.

PASTILLES DIGESTIVES, приготовленныя въ Виши изъ соли, добываемой изъ особенныхъ источниковъ, весьма пріятны на вкусъ и хорошо дѣйствуютъ противъ тошноты и труднаго пищеваренія.

SELS DE VICHY POUR BAINS. Одинъ изъ лучшихъ для ваннъ лицамъ, не могущимъ лечиться въ Виши.

Во избѣжаніе поддѣлки, требовать на всѣхъ марку Компаніи.

Թիֆլիսում Ցուրինովի մօտ:

VICHY

Управление: PARIS, 22, boulevard Montmartre. GRANDE-GRILLE. Отъ лимфатическаго располжженія, дурнаго пищеваренія, засоренія печени и селезенки, зашла, каменной болѣзни и проч.

HOPITAL. Отъ труднаго пищеваренія, тяжести желудка, потери аппетита, боли въ желудкѣ.

CELESTINS. Отъ боли въ поясницѣ, мочевого пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

HAUTERIVE. Отъ боли въ поясницѣ, мочевого пузыря, каменной болѣзни, подагры, потери аппетита.

ТРЕБОВАТЬ названіе источника на коробкѣ.

Թիֆլիսում Ցուրինովի մօտ: